ՇԱՏԻՆ

Համայնքի նստավայր

Համայնքի ղեկավար՝ Արթուր Ստեփանյան
Հեռախոս՝ +374. 93.355759, (0281) 99 2 82

Շատին գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում, Եղեգիս խոշորացված համայնքում, մարզկենտրոնից մոտ 13 կմ հյուսիս-արևմուտք, Արփա գետի աջակողմյան Եղեգիս վտակի ափին, մարզկենտրոնից 12 կմ հեռավորության վրա։ Ունի գեղեցիկ բնաշխարհ, ծովի մակերևույթից բարձրությունը կազմում է 1300-1350 մ: Արևելյան կողմից գյուղի վրա կախված են ժայռակազմ լեռների բազմայուն ճակատները։ Բնակավայրի տարածքը ձգվում է Եղեգիս գետի երկայնքով, նրա երեք վտակների հատման տեղում։ Գյուղի միջով անցնում են մարզկենտրոնն ութ գյուղերին միացնող միջմարզային ճանապարհը և դեպի Սևանի ավազան տանող միջպետական ճանապարհը։

Շատին գյուղը վերաբնակեցվել է 1828թ. Պարսկաստանի Սալմաստ գավառից ներգաղթված հայ ընտանիքներով: Գյուղն ունի հին պատմություն, ինչի մասին վկայում են գյուղում գտնվող վանքերն ու մատուռները: Գյուղի տարածքում է գտնվում երբեմնի Եղեգիս քաղաքի ավերակները,Աղվանք և Բազելիկ եկեղեցիները, Շատիվանք եկեղեցի-համալիրը: Գյուղի տարածքում է գտնվում Ավարայրի ճակատամարտից նահանջած հայրենասեր մարտիկների գերեզմանները,որոնք նահանջի ճանապարհին մարտի են բռնվել պարսիկների հետ: Այդ փաստն են վկայում Անգեղի, Սուրբ Աստվածածին և գյուղի այլ տարածքներում գտնվող մատուռները:

Բնակչության զբաղմունքն անասնապահությունն ու հողագործությունն է։ Տարածքում աճում է ցանկացած պտուղ, հատապտուղ, բանջարեղեն։ Գյուղով է անցնում «Հերմոն-Ելփին» ոռոգման ջրատարը, որի շնորհիվ հնարավոր է ոռոգելի դարձնել համայնքի շուրջ 200 հեկտար տարածք։

Տարածքում կան հանքային հանածոներ՝ շինարարական քար՝ գրանիտ, տրավերտին։

Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, առողջության կենտրոն, մշակույթի տուն, գրադարան:

Որպես հանգստի գոտի օգտագործվում է Եղեգիս գետի հունին կից ծառապատ ազատ տարածությունները:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Շատին գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 37 հուշարձան: